ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2-11

ՀՀ ԳԱԱ ԳԻՏԱԿԱՆ ԵՎ ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

Քաղաք Երևան «27» 01 2015 թ.

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի նախագահությունը, ի դեմս ՀՀ ԳԱԱ նախագահ Ռաֆիկ Մարտիրոսյանի (այսուհետ՝ ՀՀ ԳԱԱ), որը գործում է ՀՀ ԳԱԱ կանոնադրության հիման վրա, մի կողմից, և __ ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,ՊՈԱԿ_(ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ,ՊՈԱԿ) -ը, ի դեմս տնօրեն

(կազմակերպության անվանումը)

Վիգեն Թովուզյանի –ի (այսուհետ՝ Կազմակերպություն) որը գործում է

(անուն, ազգանուն)

Կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ Կողմեր), հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի նոյեմբերի 17-ի N 1121 որոշումը (այսուհետ՝ որոշում), Նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների և հատկությունների (քիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլն) ուսումնասիրում

(Ծրագրի անվանումը)

ծրագրի (այսուհետ՝ ծրագիր) իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով ՀՀ ԳԱԱ-ն պարտավորվում է ծրագրի իրականացման նպատակով Կազմակերպությանը հատկացնել Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեով նախատեսված՝ մինչև 294515.4 հազար դրամ գումար, իսկ Կազմակերպությունը պարտավորվում է ծրագիրն իրականացնել որոշմամբ և սույն պայմանագրով սահմանված կարգով:

1.2. Ծրագրով նախատեսված՝ Կազմակերպության կողմից իրականացվելիք միջոցառումների (այսուհետ՝ միջոցառումներ) կատարման փուլերի ժամկետները որոշվում

են առաջադրանքով և օրացուցային պլանով, որոնք սույն պայմանագրի անբաժանելի մասն են (հավելվածներ 1 և 2):

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. ՀՀ ԳԱԱ-ն իրավունք ունի՝

2.1.1. Կազմակերպությունից պահանջել կատարելու սույն պայմանագրի 2.4. կետով նախատեսված պարտավորությունները,

2.1.2. ցանկացած ժամանակ (այդ թվամ՝ լիազոր մարմնի միջոցով) ստուգելու Կազմակերպության կողմից իրականացվող միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը,

2.1.3. չընդունելու իրականացված միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջելու վճարել սույն պայմանագրի 6.1-ին կետով նախատեսված տուգանքը,

2.1.4. առանց իրականացված միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել պատճառված վնասները, եթե

ա. Կազմակերպությանը ժամանակին չի սկսում ծրագրի իրականացումը, կամ ծրագրի իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. Կազմակերպությունը երկու և ավելի անգամ խախտել է ծրագրով նախատեսված առանձին միջոցառումների իրականացման ժամկետները (միջոցառումների իրականացման ժամկետներ նախատեսված լինելու դեպքում),

գ. իրականացված միջոցառումները չեն համապատասխանում ծրագրով սահմանված պահանջներին,

2.1.5. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված միջոցառման արդյունքը ՀՀ ԳԱԱ-ի կողմից ընդունվելու դեպքում պահանջելու վճարել իրեն հասանելիք գումարը,

2.2.2. ՀՀ ԳԱԱ-ի կողմից գումարները չվճարվելու դեպքում միակողմանի լուծելու սույն պայմանագիրը և պահանջելու հատուցել իրեն պատճառված վնասները,

2.2.3. ծրագրի կատարման համար, օրենսդրությամբ սահմանված կարգով, ներգրավել երրորդ անձանց,

2.2.4 ՀՀ ԳԱԱ-ի գրավոր համաձայնությամբ այլ կազմակերպություններին հանձնել կատարված աշխատանքների արդյունքները:

2.3. ՀՀ ԳԱԱ-ն պարտավոր է՝

2.3.1. ծրագրով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը,

2.3.2. կատարել ծրագրի (առանձին միջոցառումների) իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ,

2.3.3. իրականացնել ծրագրով նախատեսված այլ աշխատանքներ,

2.3.4. իրականացված միջոցառման մասին ներկայացված կատարողական հաշվետվությունների վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել դրանք ստանալու օրվանից մինչև 20 աշխատանքային օրվա ընթացքում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է ծրագրի և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են: Ընդ որում, ՀՀ ԳԱԱ-ն հաշվետվությունն ընդունելու դեպքում եռօրյա ժամկետում դրա մասին գրավոր ծանուցում է Կազմակերպությանը,

2.3.5. ստուգել ու ամփոփել Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկությունների հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին հաշվարկները և իր եզրակացության հետ միասին դրանք ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարություն՝ վերջինիս կողմից սահմանված կարգով և ժամկետներում:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. ծրագիրը կատարել անձամբ,

2.4.2. ծրագիրը կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից հաստատված գիտական ծրագրի առաջադրանքին համապատասխան և դրա արդյունքը ՀՀ ԳԱԱ հանձնել սահմանված ժամկետում,

2.4.3. պայմանագրով նախատեսված ֆինանսական միջոցներն օգտագործել ծրագրով և սույն պայմանագրով սահմանված նպատակներով ու չափաքանակներով,

2.4.4. կատարել ՀՀ ԳԱԱ-ի կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները,

2.4.5. աշխատանքի սպասվելիք արդյունքի ստացման անհնարինության հայտնաբերման կամ աշխատանքը շարունակելու աննպատակահարմարության մասին անհապաղ տեղեկացնել ՀՀ ԳԱԱ,

2.4.6. ՀՀ ԳԱԱ ներկայացնել հաշվետու ժամանակաշրջանում սույն պայմանագրի շրջանակներում վճարման գումարի չափի վերաբերյալ հայտ (այսուհետ՝ հայտ) մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսի 10-ը: Հայտում նշվում է սույն պայմանագրի

շրջանակներում Կազմակերպության կողմից ծրագրի իրականացման ենթակա գործառույթների գծով ձեռք բերված քանակական ու որակական ցուցանիշների վերաբերյալ տեղեկություններ և դրանց հիման վրա հաշվարկված գումարի չափի մասին մանրամասն հաշվարկներ,

2.4.7. իրականացնել ծրագրի շրջանակներում ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրամադրված գումարների՝ Հայաստանի Հանրապետության հաշվապահական հաշվառման N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան հաշվառում,

2.4.8. սույն պայմանագրով սահմանված կարգով ՀՀ ԳԱԱ ներկայացնել միջոցառումների իրականացման մասին հաշվետվություններ առանց այլ կազմակերպությունների պատվերների կատարման ընթացքում ստացված գիտական արդյունքների, իսկ ծրագրի ավարտից հետո՝ տարեկան ամփոփ հաշվետվություն՝ դրան կցելով աշխատանքի հանձնման-ընդունման երկկողմ ակտ,

2.4.9. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել ծրագրի իրականացմանը վերաբերող փաստաթղթերին ծանոթանալու ՀՀ ԳԱԱ-ի հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում,

2.4.10. ՀՀ ԳԱԱ-ի կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվություն չընդունվելու դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է անվճար ՀՀ ԳԱԱ-ի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները,

2.4.11. ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները, ծառայությունները ձեռք բերել «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով՝ պետության կարիքների համար կատարվող գնումների կանոններին համապատասխան:

3. Ծրագրի ֆինանսավորման չափը

3.1. Ծրագրի ֆինանսավորման չափը կազմում է *294515.4 (երկու հարյուր իննսուն չորս միլիոն հինգ հարյուր տասն հինգ հազար չորս հարյուր)* _ ՀՀ դրամ:

(թվերով և բառերով)

4. Մոնիթորինգը

4.1. ՀՀ ԳԱԱ-ն ծրագրի իրականացման նախնական, ընթացիկ և ամփոփիչ արդյունքները համապատասխանության գնահատման նպատակով իրականացնում է մոնիթորինգ:

4.2. Մոնիթորինգն իրականացվում է ՀՀ ԳԱԱ-ի կամ նրա կողմից լիազորված անձի կողմից:

4.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ, և կատարվում են առաջարկություններ:

4.4. ՀՀ ԳԱԱ-ն ցանկացած ժամանակ կարող է ծրագրի շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով ծրագրին առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր:

4.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

5. Վճարման կարգը և ժամկետները

5.1. Կազմակերպությանը վճարումները կատարվում են հայտն ընդունվելու օրվան հաջորդող 20 աշխատանքային օրվա ընթացքում, եթե ծրագրով սահմանված չեն վճարումների կատարման այլ կարգ և ժամկետներ:

5.2. ՀՀ ԳԱԱ-ն վճարում է կատարած աշխատանքի համար մինչև արդյունքը ստանալու անհնարինությունը պարզելը, եթե դա տեղի է ունեցել Կազմակերպությունից անկախ հանգամանքների հետևանքով:

5.3. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը վճարում է կանխավճար՝ սույն պայմանագրով նախատեսված գումարի մինչև 92 տոկոսի չափով՝ մինչև ***270954.16(երկու հարյուր յոթանասուն միլիոն ինն հարյուր հիսուն չորս հազար հազար հարյուր վաթսուն) դրամ***

(թվերով և բառերով)

ՀՀ դրամ, որն ըստ եռամսյակների բաշխվում է հետևյալ կերպ. 1-ին եռամսյակում՝ 20 տոկոս, 2-րդ եռամսյակում՝ 25 տոկոս. 3-րդ եռամսյակում՝ 25 տոկոս, 4-րդ եռամսյակում՝ 30 տոկոս:

5.4. ՀՀ ԳԱԱ-ն Կազմակերպությանը սույն պայմանագրով նախատեսված գամարի 8 տոկոսը վճարում է տնտեսական և այլ ծախսերի մասով հատկացված գումարից, եթե միջոցառումների իրականացման մասին հաշվետվությանը ՀՀ ԳԱԱ-ի կողմից տրվել է դրական եզրակացություն:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով և ծրագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: ՀՀ ԳԱԱ-ն սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Պայմանագրի գործողության ժամկետը

7.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև Կողմերի ստանձնած պարտավորությունների՝ ամբողջ ծավալով կատարումը:

8. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

8.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

9. Եզրափակիչ դրույթներ

9.1. Պայմանագրում կատարվող փոփոխությունները կամ լրացումներն իրավաբանական ուժ ունեն, եթե կազմված են գրավոր և ստորագրված են Կողմերի կողմից:

9.2. Պայմանագիրը կնքվում է երկու օրինակով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ: Պայմանագրի անբաժանելի մասն են՝

ա. Կազմակերպության կողմից ՀՀ ԳԱԱ ներկայացված գիտական ծրագրի հայտը,

բ. Առաջադրանքը (հավելված 1),

գ. Օրացուցային պլանը (հավելված 2),

դ. Պայմանագրի գնի մասին համաձայնության արձանագրությունը (հավելված 3),

ե. Գիտական ծրագրի նախահաշիվը (հավելված 4):

9.3. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման հետ կապված, ինչպես նաև սույն պայմանագրով չնախատեսված հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	__ ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,ՊՈԱԿ_(ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ,ՊՈԱԿ) (կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք.Երևան, Ազատության 26 (հասցե)
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100	Արդշինինվեստ բանկ ՓԲԸ <Արբկիր> մասնաճյուղ, հ/հ 24712-00463360030 (բանկային վավերապայմանը)
ՀՎՀՀ 00005673	Տնօրեն՝ Վիգեն Թոփուզյան (անուն ազգանուն)
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան	
_____ (ստորագրության)	_____ (ստորագրության)
Ռ.ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	
Կ.Տ.	Կ.Տ.

«27» 01 2015թ. Հավելված 1
N 2-11 պայմանագրի

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների և հատկությունների (քիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլն) ուսումնասիրում: ծրագրի
(ծրագրի անվանումը)

1. Աշխատանքի կատարման հիմքը Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջե
2. Աշխատանքի նպատակը

Նոր դեղամիջոցների որոնում և ստեղծում, չհագեցած և հետերոցիկլիկ միացությունների տարբեր դասերի սինթեզի եղանակների մշակում, նրանց փոխարկումների առանձնահատկությունների ուսումնասիրում, սինթեզված միացությունների կիրառման ոլորտների որոնում, ֆիզիկո-քիմիական և դեղաբանական արդի եղանակներով կենսաբանորեն այտիվ միացությունների ուսումնասիրում, կառուցվածքի և ակտիվության միջև կապի որոնում:

3. . Աշխատանքին ներկայացվող հիմնական պահանջները (մեկ էջի սահմաններում) Գիտական հետազոտությունների արդիականություն, գիտական նորույթ, տվյալների վերարտադրելիություն, տվյալների համապատասխանություն միջազգային չափորոշիչներին, աշխատանքների կիրառական ուղղվածություն:

3. Աշխատանքի բովանդակությունը (3 էջի սահմաններում)

Այսօր օրգանական քիմիան ուղղորդված է ինչպես տեսական, այնպես էլ կիրառական հարցերի լուծմանը: Այս տեսակետից ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ-ի խնդիրը նոր օրգանական միացությունների ստեղծման ճանապարհների որոնումն է և նրանց քիմիական, կենսաքիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլ հատկությունների ուսումնասիրումը: Իր առջև ծառացած խնդիրների լուծման համար ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ-ը իր աշխատանքները կազմակերպելու է երկու հիմնական ուղվածությամբ: Այն է կենտրոնի օրգանիկ քիմիկոսների, ֆիզիկաքիմիկոսների, դեղաբանների ջանքերի միավորում նոր արժեքավոր հատկություններով օժտված նյութերի ստեղծման նպատակով, ինչպես նաև հետազոտության արդյունքում կիրառական արժեք ներկայացնող միացությունների ներդրման խնդիրների լուծում:

2014թ. ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ-ի գիտական և գիտատեխնիկական գործունեության ենթակառուցվածքի պահպանմանն անհրաժեշտ միջոցները ուղղված կլինեն Կենտրոնի ՎՍԱ, քիմիական 19 լաբորատորիաների և խմբերի, ֆիզիկաքիմիական 3 լաբորատորիաների և դեղաբանական 3 լաբորատորիաների աշխատանքների կազմակերպմանը:

Օրգանական սինթեզի բնագավառում կիրականացվեն հետազոտություններ ամինոթթուների ու պեպտիդների, հետերոցիկլիկ միացությունների, նուկլեինաթթուների ածանցյալների, ֆոսֆորօրգանական միացությունների, չհագեցած և արոմատիկ ածխաջրածինների, պոլիմերային

դիսպերս միացությունների ստեղծման և ռեակցիաների մեխանիզմների բացահայտման ուղղությամբ: Իրենց ուրույն տեղը կզբաղեցնեն Հայաստանի բուսական աշխարհի դեղաբույսերից կենսաբանորեն ակտիվ միացությունների կորզմանն ուղղված հետազոտությունները: Այս աշխատանքների կատարման համար մեծ են միջուկամագնիսական ռեզոնանսի սպեկտրոմետրիայի, օպտիկական սպեկտրոսկոպիայի, մաս-սպեկտրոմետրիայի և ռենտգեն-կառուցվածքային հետազոտությունների լաբորատորիաների դերը: Դեղաբանական հետազոտությունները կընթանան 3 լաբորատորիաներում հետևյալ ուղղություններով՝ սիրտ-անոթային համակարգի, չարորակ նորագոյացումների, կենտրոնական նյարդային համակարգի վրա ազդող միացությունների և կիրառական վիրահատության նպատակներին ծառայող դեղամիջոցների որոնում:

ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ-ի գործունեությունից ակնկալվող արդյունքներ:

Կենտրոնի գործունեության արդյունքում նախորդ տարիներին ստացված և ուսումնասիրված են երկու տասնյակից ավելի նոր ֆիզիոլոգիապես ակտիվ միացություններ, որոնց հետագա խորը ուսումնասիրությունները կհանգեցնեն նոր դեղամիջոցների ստեղծմանը: Կատարվող հետազոտությունները, որոնք ուղղված են օրգանական մոլեկուլում ներքին էլեկտրական դաշտերի փորձնականորեն որոշմանը, հնարավորություն կստեղծեն նյութի և կենսաբանական թիրախի մոդելավորման, ուստի և կենսաբանական հատկության կանխագուշակման համար: Սինթեզված ազոտ պարունակող ֆոսֆոնիումային աղերի հատկությունների ուսումնասիրման հիման վրա հնարավոր կլինի ստեղծել թանկարժեք մետաղների նոր էքստրագենտներ:

4. Գիտական աշխատանքի արդյունքների ներկայացման ձևը <u>Գիտական հաշվետվություն, հոդվածներ, զեկուցումներ, արտոնագրեր:</u>

Տնօրեն (ռեկտոր)՝ _____ (<u>Վիգեն Թոփուզյան</u>)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Հավելված 2
«27» 01 2015թ.
N 27-11 պայմանագրի

ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ՊԼԱՆ

Նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների և հատկությունների (քիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլն) ուսումնասիրում ծրագրի

(ծրագրի անվանումը)

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառումներ					
	անվանումը	համառոտ բովանդակություն	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամ կետը	պահանջվող գումարը (դրամ)
1.	Օրգանական միացություններ սին-թեզի եղա-նակների մշակում և կիրառում:	Իրականացնել ու-սումնասիրություններ հետերոցիկ-լիկ, չհագեցած, ամինո- և ֆոսֆոր-օրգանական միացությունների բնագավառում	40 նոր օրգանա-կան միացու-թյունների սին-թեզ և կառուց-վածքի ուսում-նասիրում	Կենսաբանորեն ակտիվ և այլ արժեքավոր հատկություններով օժտված նոր օրգանա-կան միացու-թյունների հայտանբերում:	01.04.2015	58903.1
2.	Օրգանական միացություններ սին-թեզի եղա-նակների մշակում և կիրառում:	Իրականացնել ու-սումնասիրություններ հետերոցիկ-լիկ , չհագեցած, ամինո- և ֆոսֆոր-օրգանական միացությունների բնագավառում	60 նոր օրգանա-կան միացու-թյունների սին-թեզ և կառուց-վածքի և կենսաբանական ակտիվության ուսումնասիրում	Կենսաբանորեն ակտիվ և այլ արժեքավոր հատկություններով օժտված նոր օրգանա-կան միացու-թյունների հայտանբերում:	01.07.2015	73628.8
3.	Օրգանական միացություններ սին-թեզի եղա-նակների մշակում և կիրառում:	Իրականացնել ու-սումնասիրություններ հետերոցիկ-լիկ,չհագեցած, ամինո- և ֆոսֆոր-օրգանական միացությունների բնագավառում	60 նոր օրգանա-կան միացու-թյունների սին-թեզ և կառուց-վածքի և կենսաբանական ակտիվության ուսումնասիրում	Կենսաբանորեն ակտիվ և այլ արժեքավոր հատկություններով օժտված նոր օրգանա-կան միացու-թյունների հայտանբերում	01.10.2015	73628.8

4.	Օրգանական միացությունների սինթեզի եղանակների մշակում և կիրառում:	Իրականացնել ուսումնասիրություններ հետերոցիկլիկ,չհագեցած, ամինո- և ֆոսֆորօրգանական միացությունների բնագվառում	40 նոր օրգանական միացությունների սինթեզ և կառուցվածքի և կենսաբանական ակտիվության ուսումնասիրում	Կենսաբանորեն ակտիվ և այլ արժեքավոր հատկություններով օժտված նոր օրգանական միացությունների հայտանբերում	30.12.2015	88354.7
	Ընդամենը				294515.4	հազ.դրամ

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիա

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն, ՊՈԱԿ_(ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ,ՊՈԱԿ)
(կազմակերպության անվանումը)

Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան

(ստորագրություն)

Տնօրեն՝ Վիգեն Թոփուզյան
(անուն ազգանուն)

(ստորագրություն)

«27» 01 2015թ. Հավելված 3
N 2-11 պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Պայմանագրի գնի մասին համաձայնություն

Նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների և հատկությունների (քիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլն) ուսումնասիրում ծրագրի
(ծրագրի անվանումը)

Մենք՝ ներքոստորագրյալներս, ի դեմս ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահ Ռադիկ Մարտիրոսյանի և ի դեմս __ ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,ՊՈԱԿ_(ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ,ՊՈԱԿ) –ի տնօրեն
(կազմակերպության անվանումը)՝

Վիգեն Թոփուզյանի _-ի, վկայում ենք, որ Կողմերը համաձայնություն են ձեռք բերել
(անուն ազգանուն)

«27» 01 2015թ. N 2-11 պայմանագրով աշխատանքի արժեքի վերաբերյալ՝ է *294515.4 (երկու հարյուր իննսուն չորս միլիոն հինգ հարյուր տասն հինգ հազար չորս հարյուր)* _ ՀՀ դրամ գումարի չափով:
թվերով և բառերով

Սույն արձանագրությունը հիմք է Կողմերի միջև փոխադարձ հաշվարկների և վճարումների համար:

ՀՀ գիտությունների ազգային ակադեմիա	__ ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,ՊՈԱԿ_(ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ,ՊՈԱԿ) (կազմակերպության անվանումը)
ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 24	ք,Երևան, Ազատության 26 (հասցե)
Արարատ բանկ ԲԲԸ Հ/հ 1510005175820100	Արդշինինվեստ բանկ ՓԲԸ <Արբկիր> մասնաճյուղ, հ/հ 24712-00463360030 (բանկային վավերապայմանը)
ՀՎՀՀ 00005673	Տնօրեն՝ ___Վիգեն Թոփուզյան (անուն ազգանուն)
Նախագահ՝ Ռ. Մարտիրոսյան (ստորագրություն) ՌԱԴԻԿ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ	(ստորագրության)

«27» 01 Հավելված 4
2015թ.
N 2-11 պայմանագրի

Գիտական ծրագրերի նախահաշիվ

NN ը/կ	ծախսերի հոդվածների անվանումը	ընդամենը (հազար դրամ)	այդ թվում			
			1-ին եռամսյակ	2-րդ եռամսյակ	3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	աշխատավարձ և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարներ	239616.0	58903.1	60904.9	59904.0	59904.0
2	տնտեսական և այլ ծախսեր	54899.4	-	12723.9	13724.8	28450.7
3	ընդամենը	294515.4	58903.1	73628.8	73628.8	88354.7

Տնօրեն (ռեկտոր)՝ _____ (Վիգեն Թոփուզյան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (_Սուսաննա Բաբայան)
(ստորագրություն) (անուն ազգանուն)

Կ.Տ.

ՀԱՅՏ N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԻՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ*

ՀՀ ԳԱԱ Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոն,ՊՈԱԿ_(ՀՀ ԳԱԱ ՕԴՔԳՏԿ,ՊՈԱԿ)

(կազմակերպության անվանումը)

Արդշինինվեստ բանկ ՓԲԸ <Արբկիր> մասնաճյուղ, h/h 24712-00463360030

(հաշվեհամարը)

Բաժին _01 Խումբ _04 Դաս _01 Ծրագիր _03

«____» _____ 2015 թ.

Նոր օրգանական միացությունների սինթեզի եղանակների և հատկությունների (քիմիական, ֆիզիկաքիմիական, դեղաբանական և այլն) ուսումնասիրում (ծրագրի անվանումը)

հոդված	գումարը		լրացվում է ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի աշխատակազմի կողմից
	փոխանցումներ	կանխիկ	մերժվում է
4637			
Ընդամենը			

Փոխանցվող գումարը *երկու հարյուր իննսուն չորս միլիոն հինգ հարյուր տասն հինգ հազար չորս հարյուր* դրամ

Կանխիկ գումարը բառերով _____

Ստացողի տվյալները Ավագյան Ելենա, անձնագիր AM 0415931 տրված 10.08.2011, 004

(գանձապահի անունը, ազգանունը անձնագրի տվյալները)

Առաջին կարգի ստորագրություն _____ Վիգեն Թոփուզյան

Երկրորդ կարգի ստորագրություն _____ Սուսաննա Բաբայան

Կ. Տ.

Բանկի անվանումը Արդշինինվեստ բանկ ՓԲԸ <Արաբկիր >մասնաճյուղ

ԴՈՒՐՍ Է ԳՐՎԵԼ ԿԱՆԽԻԿ ՉԵԿ N

---

* *Կից ներկայացնել պահանջվող ֆինանսավորման մանրամասն հաշվարկը-բացատրագիր*

Հաշվարկ-բացատրագրի

պահանջվող ֆինանսավորման մասին*

Պահանջվող ֆինանսավորումը բավարարում է միայն հաշվարկված աշխատավարձին:

Առաջին կարգի ստորագրություն _____ Վիգեն Թոփուզյան

Երկրորդ կարգի ստորագրություն _____ Սուսաննա Բաբայան

Կ. Տ.

---

* *Մանրամասն բացատրել և հիմնավորել ֆինանսավորման հայտը*